

Ասիկա ա'լ աւելի գէշ արդիւնք մը ունեցաւ, վասնզի ժողովուրդը բոլորովին երես դարձուց նուիրակէն, որ հազիւ քիչ մը դրամ կրցաւ հաւաքել և զայն գործածեց կաշառքի և Թուլթուլեանները գոհացնելու: Իսկ Յովհաննէս տեսնելով այս վիճակը և պարտքը վճարելու իր անկարողութիւնը, մանաւանդ որ ունեցածն ալ սպառած էր կաշառք տալով, սկսաւ կեղեքել ժողովուրդը, «քանզի յանցանս արկեալ ի վերայ նոցա, կամ առիթ առեալ ի քեքել իրաց՝ տուգանս ծանուցնս զնեք ի վերայ նորա, եւ մանաւանդ ի վերայ եկեղեցականաց, զորոց գրել ի մասնաւորի զանց առնեմք», ինչպէս կ'ըսէ Ջամիլեան (Գ. էջ 694): Հակառակ այս շարաշահութիւններուն սակայն, իր պատրիարքութեան ընթացքին՝ Յովհաննէս պատրիարք Թիւթիւնճի չկրցաւ հատուցանել այդ գումարը, թէև սքանչելի առիթ մըն ալ ներկայացաւ իրեն:

Կիրիկիոյ Մինտէրճի մականնուանեալ Խաչատուր կաթողիկոս Գաղատացին (1657—1674), որուն ձեռնասուռնն էր Ղազար Սեբաստացի, 1663ին Հալէպի մէջ ասորի Անդրէաս տնուն եպիսկոպոս մը կաթողիկոս ձեռնադրած էր. իբր հակաթոռ Ասորւոց Ս. Պարսամ աթոռին:

Ասորի օրինաւոր կաթողիկոսը իբր փոխադարձութիւն գրգռած էր Հալէպի հայառաջնորդը՝ Դաւիթ եպս. Կարկառեցին, որ ինքն ալ Խաչատուրին հակաթոռ ըլլայ:

Դաւիթ, այս ծրագիրը յաջողցնելու համար, գնաց Պոլիս և կաշառեց Յովհաննէս Թիւթիւնճին, որ դրամի պէտք ունէր, իր իւրացուցած գումարները վերադարձնելու համար: Այս կերպով Դաւիթ Կարկառեցի իր կողմը շահեցաւ պատրիարքը ու իր կողմնակիցները, և ապա կառավարութեան առջև ամբաս-